ԿԱՐԾԻՔ

««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», ««Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», ««Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերիվերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. ««Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի[1] 8-րդ հոդվածով նախատեսվում է «Սնակության մասին» ՀՀ օրենքի[2] 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, դատավորը նշանակում է դատական նիստ, որին հրավիրվում են պարտապանը և դիմումում նշված պարտատերերը:»:

   Հարկ է նշել, որ Օրենքի 16-րդ հոդվածը վերնագրված է «Սնանկ ճանաչելը կամավոր սնանկության դիմումի հիման վրա», ինչից բխում է, որ տվյալ հոդվածի կարգավորումներն առնչվում են կամավոր սնանկության հարցերին, մինչդեռ խմբագրված հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունը վերաբերում է հարկադրված սնանկությանը:

   Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծում կատարել համապատասխան փոփոխություն:

2. Նախագծի 17-րդ հոդվածը նախատեսում է Օրենքը լրացնել. «Կառավարչի լիազորությունները դադարեցնելը» վերտառությամբ 29.2 հոդվածով, որի 3-րդ մասի համաձայն 29.2 հոդվածի 1-ին մասի 6-8-րդ կետերով նախատեսված դեպքերում կառավարչի լիազորությունները դադարեցվում են համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

   Մինչդեռ, 29.2 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը վերաբերում է կառավարչի լիազորությունների դադարեցմանը կառավարչի՝ օրենքով սահմանված պարտականությունների կոպիտ կամ պարբերական խախտումների հիմքով: Ընդ որում, նշված հոդվածի համաձայն՝ 8-րդ կետով սահմանված հիմքով կառավարչի

[1] Այսուհետ՝ Նախագիծ
[2] Այսուհետ՝ Օրենք

լիազորությունները դադարեցվում են սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի որոշմամբ, այլ ոչ թե դատական կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 29.2 հոդվածի 3-րդ մասից հանել 29.2 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին կատարված հղումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ